

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

**Հոդված 47.13. Օրենքով թույլատրված դեպքերում հղիության արհեստական ընդհատում (աբորտ) իրականացնելիս օրենքով նախատեսված պարտադիր փաստաթղթերը չստանալը**

1. Օրենքով թույլատրված հղիության արհեստական ընդհատման (աբորտի) դեպքում բժշկի կողմից հղի կնոջ կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը կամ գրավոր համաձայնությունը չստանալը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

2. Բժշկի կողմից օրենքով նախատեսված դեպքում հղիության արհեստական ընդհատումն առանց բժշկական հանձնաժողովի որոշման իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսունապատիկից հարյուրապատիկի չափով:

3. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար՝ սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:

*(47.13-րդ հոդվածը լրաց. 29.06.16 ՀՕ-135-Ն)*

**Հոդված 47.14. Ապաստարանում տեղավորված՝ ընտանիքում բռնության ենթարկված անձի գտնվելու վայրը հրապարակելը**

1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ապաստարանում տեղավորված անձի գտնվելու վայրը հայտնելն այն անձին, որն այդ մասին տեղեկանալու իրավասություն չունի այն անձի կողմից, որն այդ մասին տեղեկացել է իր ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարելու կապակցությամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

*(47.14-րդ հոդվածը լրաց. 13.12.17 ՀՕ-324-Ն)*

□ Հոդված 47.15 էլեկտրոնային առողջապահության համակարգին չմիանալը, պարտադիր վարման ենթակաբժշկական (այդ թվում՝ էլեկտրոնային) փաստաթղթեր չվարելը կամ դրանց լրացման կամ շրջանառության պահանջները խախտելը,

1. էլեկտրոնային առողջապահության համակարգին չմիանալը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով:

2. Պարտադիր վարման ենթակա բժշկական (այդ թվում՝ էլեկտրոնային) փաստաթղթեր չվարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև վաթսուներկապատիկի չափով,

3. Պարտադիր վարման ենթակա բժշկական (այդ թվում՝ էլեկտրոնային) փաստաթղթերի լրացման կամ շրջանառության պահանջները խախտելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.16 Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից ժամանակավոր անաշխատունակության թերթիկի լրացման ու տրամադրման կարգը խախտելը

1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից ժամանակավոր անաշխատունակության թերթիկի լրացման ու տրամադրման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.17 Պացիենտին կամ նրա օրինական ներկայացուցչին իրազեկման թերթիկ չտրամադրելը

1. Օրենքով սահմանված պահանջներին համապատասխան պացիենտին կամ նրա օրինական ներկայացուցչին իրազեկման թերթիկ չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.18 Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման իրականացման պահանջները չկատարելը կամ խախտելը

1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից օրենքով նախատեսված դեպքում արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման իրականացմանը ներկայացվող պահանջները չկատարելը կամ խախտելը

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազար հինգ հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

Առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.19 Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից օրենքով նախատեսված պաշտոնական ինտերնետային կայք չունենալը կամ օրենքին համապատասխան պաշտոնական ինտերնետային կայք չունենալը

1. Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից օրենքով նախատեսված պաշտոնական ինտերնետային կայք չունենալը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

2. Արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից օրենքով նախատեսված պաշտոնական ինտերնետային կայք չունենալը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

3. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի պաշտոնական ինտերնետային կայքում ծառայությունների կամ գնացուցակի կամ բուժանձնակազմի վերաբերյալ տվյալների կամ մասնագիտական ծառայություններ մատուցողների հետ հետադարձ կապի հնարավորության բացակայությունը

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև վաթսուներկապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված արարքները կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.20 Բժշկական հաստատություն տեղափոխված պացիենտի (ինչպես նաև մահացած անձի) վերաբերյալ ոստիկանություն հաղորդում չներկայացնելը կամ դրա ներկայացնելու կարգը խախտելը

1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից բժշկական հաստատություն տեղափոխված պացիենտի (ինչպես նաև մահացած անձի) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համապատասխան հաղորդում չներկայացնելը կամ դրան երկայացնելու կարգը խախտելը

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

Առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հողված 47.21 Մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հիմքով արգելված դեպքերում բուժաշխատողի կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելը

1. Բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման հիմքով օրենքի համաձայն արգելված դեպքերում բուժաշխատողի կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելը՝

բուժաշխատողի համար առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի համար առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրիսնապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հողված 47.22 Բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում սահմանված պահանջները խախտելը

Բժշկական արտադրատեսակների շրջանառության ոլորտում սահմանված պահանջները խախտելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Հողված 47.23 Առանց օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվության՝ օտարերկրացի բուժաշխատողի կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը

1. Առանց օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվության օտարերկրացի բուժաշխատողի կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի համար առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրիսնապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

**Հողված 230. Առողջապահական տեսչական մարմինը  
(վերնագիրը խմբ. 21.03.18 ՀՕ-173-Ն)**

1. Սույն օրենսգրքի 42-րդ, 42.1-43-րդ, 45-47.13-րդ, 47.15, 47.16, 47.17, 47.18, 47.19, 47.20, 47.21, 47.22, 47.23, 80-86-րդ (եթե դրանք համարվում են մթնոլորտային օդի պահպանության սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի խախտումներ), 87-րդ

(առողջապահական տեսչական մարմնի կարգադրագրերը չկատարելու համար), 96.1-ին, 152-րդ հոդվածներով, 158-րդ հոդվածի 19-րդ մասով, 173.3-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Առողջապահական տեսչական մարմինը:

*(230-րդ հոդվածը փոփ. 14.06.94 ՀՕ-105, 26.12.02 ՀՕ-499-Ն, 25.12.03 ՀՕ-31-Ն, 14.12.04 ՀՕ-187-Ն, 24.03.05 ՀՕ-78-Ն, լրաց. 06.12.07 ՀՕ-296-Ն, փոփ. 18.03.08 ՀՕ-8-Ն, 24.06.10 ՀՕ-118-Ն, խմբ. 21.03.18 ՀՕ-173-Ն)*

**Հոդված 244<sup>44</sup>. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարմինները**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարմինները քննում են սույն օրենսգրքի 45-47<sup>4</sup>, 47.7 և 47.8, 47.10, 47.11, 47.12, 47.13 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր նշանակում է (են) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարը կամ նրա լիազորված պաշտոնատար անձը (անձինք):

*(նոր՝ 244<sup>44</sup> - րդ հոդվածը լրաց. 08.04.08 ՀՕ-7-Ն, 11.09.12 ՀՕ-182-Ն, փոփ. 20.11.14 ՀՕ-182-Ն, լրաց. 29.06.16 ՀՕ-135-Ն, 17.05.16 ՀՕ-89-Ն)*

*(244<sup>44</sup> - րդ հոդվածը 06.10.15 ՀՕ-115-Ն օրենքի 2-րդ հոդվածի լրացմամբ ուժի մեջ կանոնի 01.01.2021 թվականին)*